

ԱՆԱՀԻՏ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Ֆինանսներ, բակալավրիատ,
3-րդ կուրս

**ԵԱՏՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՅԸ ԵՎ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԸՆԶԵՌԱԾ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հիմնաբառեր. Եվրասիական տնտեսական միություն
(այսուհետ՝ ԵԱՏՄ), ներմուծման մաքսա-
տուրքեր, մաքսային տարածք, ինտեգրա-
ցում, բյուջե

ԵԱՏՄ անդամակցությամբ մեր երկիրը որդեգրեց նոր մաքսային քաղաքակա-
նություն, ինչն իր արտացոլումը գտավ նաև երրորդ երկրներից ներմուծվող ապրանք-
ների նկատմամբ սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերից զոյացած բյուջեդային
մուտքերում, իսկ միասնական մաքսային տարածքի ձևավորմամբ հնարավորություն
ստացանք ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տե-
ղաշարժի Միության մաքսային տարածքում: Դիտարկելով Միությանն անդամակցու-
թյան պաշտոնական հիմնավորումները և վերլուծաբանների տեսակետները՝ մեր
խնդիրն է բացահայտել, թե ինչ ազդեցություն է ունեցել Միությանն անդամակցու-
նը ՀՀ պետական բյուջեի վրա մուտքերի մասով և ինչ հնարավորություններ են ստեղ-
ծում միասնական մաքսային տարածքի ձևավորումն ու ներմուծման մաքսատուրքերի
դրույթաչափերի փոփոխությունը տնտեսության հետագա զարգացման համար:

Նյութում քննարկվել են.


- անդամակցության առաջին տարիներին տնտեսական մի շարք ցու-
ցանիշների բացասական միտումների պայմանավորվածությունը ոչ
այնքան Միությանն առնչվող, որքան աշխարհաքաղաքական և այլ
արտաքին գործոններով,
- մաքսային տարածքի միասնականացման ազդեցությունը մի շարք
ցուցանիշների վրա,
- բյուջետային մուտքերի շարժընթացը ներմուծման մաքսատուրքերի
մասով,
- վեր են հանվել խնդիրներ ու առաջարկվել դրանց լուծման ուղիներ:

Պատմության ընթացքում երկրները ձևավորում են տարբեր տնտեսա-
կան միություններ արդյունավետ և պարզեցված փոխգործակցության ապա-
հովման նպատակով: Անժխտելի է ԵՄ դերը՝ որպես գրավիչ ինտեգրացիոն
միավորում: Եվ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ն բավական երկար
ինտեգրացիոն ճանապարհ էր անցել ԵՄ-ի հետ, և մոտ չորս տարի բանակ-
ցություններ էին ընթանում Եվրոպական միության հետ Առցացման պայմա-
նագրի շուրջ, 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրվեց
«2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին
պայմանագրին Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին»
պայմանագիրը, որը սկիզբ էր դնում արդեն 2015 թվականից՝ այդ ժամանակ
դեռևս հինգ ամիս առաջ ձևավորված միությանը ՀՀ անդամակցությանը:

Հայաստանը, առհասարակ, շարժվում է «և՛...և՛» սկզբունքով՝ տնտեսական համագործակցության տեսանկյունից և, ելնելով աշխարհաքաղաքական, տնտեսական, ռազմական ու մի շարք այլ դրդապատճառներից, այսօր անդամակցում է ԵԱՏՄ-ին՝ չանտեսելով ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման կարևորությունը:

ԵԱՏՄ անդամակցությամբ Հայաստանը, կարող ենք արձանագրել, որ կարողացավ շարունակել փոխգործակցությունը արևմտյան երկրների հետ, միաժամանակ, ձեռք բերեց ռազմավարական դաշնակիցների հետ ավելի սերտ տնտեսական կապեր ստեղծելու հնարավորություն, ինչպես նաև բավական տարողունակ շուկա, որը փոքր տնտեսությամբ երկրի համար արտահանման ընդլայնման շուկա է՝ ավելի քան 180 մլն բնակչությամբ: ԵԱՏՄ մուտքով նաև հնարավորություն ստացանք ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի Միության մաքսային տարածքում:

ԵԱՏՄ անդամակցությունը մեզ տվեց ապրանքների ազատ տեղաշարժի հնարավորություն միության ողջ տարածքում, որը խթան է ապրանքաշրջանառության ակտիվացման համար՝ պայմանավորված անդամ երկրների միջև ներմուծման-արտահանման ժամանակ վճարվող մաքսային վճարների նվազեցման հաշվին ապրանքների ինքնարժեքի իջեցմամբ:



Գծապատկեր 1. ՀՀ արտաքին առևտրի ընդհանուր արդյունքները (հազ. ԱՄՆ դոլար)¹


Դիտարկելով ներմուծման-արտահանման շարժընթացը՝ տեսնում ենք, որ ԵԱՏՄ անդամակցությունից հետո արտահանման աճի տեմպը զգալիորեն աճել է, սակայն զուտ արտահանմանը (արտահանում-ներմուծում)՝ վերջին երկու տարիներին նվազել՝ պայմանավորված ներմուծման թռիչքաձև աճով, այն պարագայում, երբ ներկայացված տվյալներում հաշվի չեն առնվել ԵԱՏՄ երկրներից ներմուծված 2017 թ.-ին 7599 հատ և 2018 թ.-ին՝ 7504 հատ ավտոմեքենաները: 2015-2016 թթ.-ին ներմուծման անկում ենք նկատում, ինչը գերազանցապես պայմանավորում ենք Միությանն անդամակցության նոր

¹ Ըստ ՊԵԿ-ի «Մաքսային վիճակագրության» տվյալների, <http://www.petekamutner.am>

պայմանների, նոր օրենսդրական դաշտի կիրառմամբ, մասնավորապես՝ գործարար շրջանակներում ստեղծված նոր պայմանների նկատմամբ զգուշավորությամբ:

Դիտարկելով Միությանն անդամակցությանը նախորդող և հաջորդող առաջին տարիների տնտեսական ցուցանիշները՝ տեսնում ենք ընդհանուր շարժընթացի որոշակի փոփոխություն: 2014 և 2015 թվականներին ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունում ՌԴ մասնաբաժինը կազմել է համապատասխանաբար 24% և 24,8%՝ բացարձակ առաջատար դիրք զբաղեցնելով այլ երկրների հետ համեմատած: Թեև հարաբերական աճին, բացարձակ մեծությամբ արձանագրվել է ավելի քան 257 մլն դոլարի առևտրաշրջանառության անկում, այսինքն՝ 2015 թվականին նախորդ տարվա համեմատ՝ 18%: Նույն ժամանակաշրջանում Ղազախստանի և Բելառուսի հետ առևտրաշրջանառությունը նվազել է համապատասխանաբար 2,4 և 0,8 մլն դոլարով կամ 31,4 և 2%-ով՝ հարաբերական մեծությամբ¹:

Արդեն 2018 թվականին արտաքին առևտրաշրջանառությունը ՌԴ-ի հետ կազմել է ավելի քան 1,9 մլրդ դոլար, ինչը 2017 թվականի նկատմամբ ավելի է 11,2%-ով, իսկ 2015-ի նկատմամբ՝ 64%-ով: Բելառուսի և Ղազախստանի հետ 2018-ին, 2015 թվականի հետ համեմատած, նույն ցուցանիշն աճել է 28 և 161%-ով: Դրդստանի հետ 2018 թվականին շուրջ 1,3 մլն դոլարի առևտրաշրջանառություն ենք ունեցել²:



* 2019 թ. առաջին կիսամյակի տվյալները

Գծապատկեր 2. ՀՀ ներմուծման ծավալները ԵԱՏՄ անդամ և երրորդ երկրներից (մլն ԱՄՆ դոլար)³

ՀՀ-ն գերազանցապես ներմուծող երկիր է (ներմուծման ծավալները միջին հաշվով ավելի քան երկու անգամ գերազանցում են արտահանման ծա-

¹ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., 2016, էջ 114, http://armstat.am/file/article/sv_12_15a_411.pdf

² ԱՎԾ, արտաքին հատվածի վիճակագրական ցուցանիշների հիման վրա, https://www.armstat.am/file/article/sv_12_18a_411.pdf, https://www.armstat.am/file/article/sv_12_15a_411.pdf

³ Ըստ ԱՎԾ ներմուծման վիճակագրական ցուցանիշների և ՊԵԿ-ի ներմուծման վիճակագրության տվյալների:

վալները), և մինչ Միությանն անդամակցելը ներմուծման մեծ մասը ԵԱՏՄ ոչ անդամ երկրներից էր: Անդամակցության առաջին տարիներին ներմուծման ծավալների կտրուկ անկում է գրանցվել, այնինչ հետագա տարիներին՝ կրկին աճ հատկապես ԵԱՏՄ ոչ անդամ երկրներից՝ գերազանցապես պայմանավորված Հայաստանին տրված դրույքաչափերի արտոնություններով: Ինչպես երևում է գծապատկերից, կա ԵԱՏՄ անդամ երկրներից ներմուծման ծավալների աճի տեմպի մեծացում՝ արդեն սկսած 2016 թվականից:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ Միությանն անդամակցության առաջին տարիներին առևտրաշրջանառության ծավալների բացասական շարժընթացը պայմանավորված էր միայն նոր իրավիճակին չհարմարվածությամբ, ինչի ապացույցն է հետագա տարիներին փոփոխության դրական միտումը:

Միության մաքսային տարածքում սահմանվում է նաև ծառայությունների, աշխատուժի և կապիտալի ազատ տեղաշարժ: Հաշվի առնելով Հայաստանից դեպի նախկին ԽՍՀՄ երկրներ, առավելապես Ռուսաստանի Դաշնություն արտագնա աշխատանքի մեկնածների բարձր ցուցանիշները՝ կարող ենք վկայել, որ ունենք բավական շահեկան պայմաններ: Այս համատեքստում դիտարկելով դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումների շարժընթացը՝ տեսնում ենք, որ 2015 թվականին 2014-ի նկատմամբ նվազում է արձանագրվել շուրջ 30%՝ կազմելով 1,43 մլրդ ԱՄՆ դոլար, հաջորդ ժամանակահատվածում նվազել է 7%-ով, իսկ արդեն 2017 թ.-ին ունենք ավելի քան 12% աճ: Քանի որ Հայաստան եկող տրանսֆերտների ամենամեծ աղբյուրը ՌԴ-ն է, այստեղ ևս կարող ենք արձանագրել, որ դրանց ծավալի նվազումը պայմանավորված էր Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներով և ռուսական ռուբլու փոխարժեքի կտրուկ անկմամբ (2016 թվականի հունվարին 2014-ի նկատմամբ ռուբլու փոխարժեքը՝ ՀՀ դրամով արտահայտված, գրեթե կրկնակի նվազել է):¹ Կարևոր ենք համարում միասնական արժույթի բացակայության հիմնահարցը, ինչը փոխադարձ տնտեսական հարաբերություններում լրացուցիչ ռիսկերի աղբյուր է դառնում: Միասնական արժույթային համակարգի առկայության անհրաժեշտությունը կարևորվում է ոչ միայն տրանսֆերտների, այլև միասնական աշխատանքային շուկայի ստեղծմամբ պայմանավորված կենսաթոշակային համակարգի միասնականացման, փոխադարձ հաշվարկներում արժույթային ռիսկի նվազեցման անհրաժեշտությամբ: Սա ևս կնպաստի արտաքին ազդակների նկատմամբ ԵԱՏՄ ներքին շուկայի կայունությանը:

ՀՀ տնտեսության առանձնահատկություններից ելնելով՝ բանակցությունների արդյունքում սահմանվել է ներմուծման մաքսատուրքերի *սադի-ճանական* անցում միասնական մաքսային սակագներիին: Անդամ երկրների արտադրությունը խթանելու համար առավել բարձր դրույքաչափեր են սահմանված այն ապրանքների համար, որոնք արտադրվում են անդամ երկրներում:

Դիտարկելով ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը ՀՀ-ում մինչև ԵԱՏՄ անդամակցությունը ու ՄՄՍ-ով և նաև հաշվի առնելով ՀՀ տնտե-

¹ Ըստ ՀՀ ԿԲ արտաքին հատվածի վիճակագրության տվյալների, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

սության զարգացած ու զարգացման հնարավորություն ունեցող ճյուղերը՝ առավել հեռանկարային են ոսկերչությունը, ադամանդագործությունը, հանքային ջրերի արտադրությունը, գորգագործությունը, պղնձից պատրաստված արտադրատեսակների արտադրությունը, ջերմոցային տնտեսությունը: Մասնավորապես՝ ՀՀ հարավային դիրքը ԵԱՏՄ անդամ մյուս երկրների նկատմամբ առավելություն է տալիս ջերմոցային տնտեսության զարգացման միջոցով բանջարեղենի, ծաղիկների արտադրության ու իրացման ծավալների աճի: Զգազավորված հանքային ջրերի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը մինչ ԵԱՏՄ անդամակցությունը 10 տոկոս էր, իսկ ՄՄՄ-ով սահմանված է 15 տոկոս, բայց ոչ պակաս 0,07 եվրո՝ 1 լ-ի համար. սա ևս կհանգեցնի այս ուղղությամբ իրացման ծավալների աճի:

Աղյուսակ 1

Մաքսատուրքերի ծավալներն ըստ տարիների (մլն դրամ)¹

	2014	2015	2016	2017	2018	2019*
Մաքսատուրք, այդ թվում	48,397.1	61,487.5	55,428.5	72,561.6	80,235.9	65,854.8
ԵԱՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված	-	53,445.4	52,979.4	68,582.8	73,204.7	55,544.7
աճի տեմպ/մաքսատուրքեր	109.3	127.0	90.1	130.9	110.6	111.0
աճի տեմպ/ԵԱՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված	-	-	99.1	129.5	106.7	102.5

* 2019 թ. հունվար-սեպտեմբերի տվյալները. աճի տեմպը հաշվարկված է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի տվյալների նկատմամբ²

Առևտրաշրջանառության ծավալների շարժընթացում դիտարկված միտումն իր արտացոլումն է գտել նաև բյուջետային եկամուտների մասով. 2016 թվականին միայն մաքսատուրքերից եկամուտների նվազում ենք ունեցել: Ժամանակագրական շարքերի ուսումնասիրության արդյունքում տեսնում ենք, որ անդամակցության տարիներին բյուջետային եկամուտները մաքսատուրքերի մասով զգալիորեն աճել են մինչև անդամակցությունը ժամանակահատվածի նկատմամբ: Հաշվի առնենք, որ «Հայաստանի Հանրապետության» «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 2-րդ հավելվածով ներմուծման մաքսատուրքերի բաշխման նորմատիվը ՀՀ-ի համար սահմանված էր 1,13%, որը նվազեցվեց 1,11%-ի՝ Ղրղզստանի անդամակցությամբ պայմանավորված, իսկ 2017 թվականի ապրիլին, նորմատիվների վերանայումից հետո՝ 1,22%-ի. նորմատիվների փոփոխությունը, ինչպես տեսնում ենք աղյուսակից, ևս արտահայտվել է ԵԱՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված մաքսատուրքերի բացարձակ մեծությունների փոփոխությամբ:

Երրորդ երկրներից, ապրանքների ներմուծման մաքսատուրքերի բաշխման նորմատիվների հաշվարկման երկու հիմնական մեթոդների հետ մեկ-

¹ Հարկային վիճակագրական տվյալների արխիվ, 2014-2018 թթ., <http://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTITaxStatArchive>

² ՊԵԿ-ի հարկային վիճակագրական տվյալներ, 2019 թվականի սեպտեմբեր ամսվա Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն, <http://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTITaxStatData>

տեղ, քննարկվում է նաև ներքին առևտրի խթանման նպատակով մշակված երրորդ մեթոդ՝ ըստ որի ներմուծման մաքսատուրքերի մի մասը բաշխվում է հիմնական երկու մեթոդներից մեկով, իսկ մյուսը պրեմիում է՝ որպես փոխադարձ ներմուծման կամ արտահանման մասնաբաժին¹։ Մեր կարծիքով՝ ագրեգացված ցուցանիշի կիրառումը կարող է նպաստել ներմուծման մաքսատուրքերի բաշխման առավել օբյեկտիվ լինելուն, սակայն առաջարկում ենք այդ ցուցանիշի հաշվարկման հետևյալ մոտեցումը. որպես նորմատիվների հաշվարկման կոմբինացված մեթոդ՝ նպատակահարմար է իրականացնել երեք հիմնական ցուցանիշների վրա հիմնված ընդհանրական ցուցանիշի հաշվարկ, որտեղ առաջին բաղադրիչը կլինի տվյալ երկրի ՀՆԱ հարաբերությունը բոլոր երկրների ՀՆԱ ցուցանիշների հանրագումարին, երկրորդը՝ երրորդ երկրից ներմուծվող ապրանքների մաքսային արժեքների հանրագումարի տեսակարար կշիռն ընդհանուրում, երրորդը՝ բնակչության տեսակարար կշիռը։ Առաջին և երկրորդ բաղադրիչներին տրվում է առավել մեծ տեսակարար կշիռ՝ որպես հիմնական մակրոտնտեսական ցուցանիշ և յուրաքանչյուր երկրի կողմից ԵԱՏՄ բյուջե կատարվող վճարումների համամասնության պահպանման գրավական։ Ի տարբերություն կիրառվող մեթոդի, այս դեպքում որպես հիմք ընդունում ենք միայն ներմուծման արժեքային ցուցանիշը, հաշվի առնելով, որ դա է ընկած անդամ պետություններից միութենական բյուջե կատարվող վճարումների հիմքում, սակայն դրան տալիս ենք ավելի քիչ տեսակարար կշիռ՝ նվազեցնելով աշխարհագրական դիրքով և միասնական մաքսային տարածքի ձևավորմամբ պայմանավորված ներմուծման ուղիների հնարավոր փոփոխություններն ու անդամ երկրների միջև ներմուծման ծավալների վերաբաշխումը։ Իսկ երրորդ բաղադրիչն ունի անդամ երկրների տնտեսությունների աջակցման և համահավասար զարգացման խթանման միջոցի դեր, մասնավորապես՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշի վրա որոշակի ազդեցությամբ արտահայտված. իհարկե, վերջինս, զուտ համահարթ զարգացման նպատակ հետապնդելով, ունի փոքր տեսակարար կշիռ ցուցանիշի հաշվարկում։ Վերջին բաղադրիչի առկայությունը բարենպաստ փոփոխություն կլինի հատկապես ՀՀ-ի համար, քանի որ վերջինս բնակչության խտությամբ առաջինն է անդամ երկրներից։ Համակցված ցուցանիշի կիրառումը կներառի մի քանի տնտեսական գործոն, ինչը բաշխման առավել օբյեկտիվ միջոց կլինի։

Դիտարկելով բյուջեի հարկային մուտքերը ԱԱՀ և ակցիզային հարկի մասով՝ կրկին նկատում ենք նույն շարժընթացը՝ աճի տեմպի ավելացում 2016 թվականից սկսած, ընդ որում, ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների գծով ԱԱՀ-ն ունի աճի միտում։ Այս առումով, կարծում ենք, որ միասնական հարկային համակարգի ստեղծումը կնպաստի փոխադարձ առևտրի ակտիվացմանը, սակայն միասնական կարգավորումը պետք է տրվի ընդհանուր դրույթների, միջակայքային դրույքաչափերի ձևով, իսկ անդամ պետություններն ազգային օրենսդրությամբ իրենց երկրում կիրականացնեն կարգավորում՝ հիմնվելով միասնական կանոնների ու իրենց տնտեսությանը բնորոշ առանձնահատկությունների վրա։

¹ http://www.eurasiancommission.org/ru/act/finpol/dofp/Documents/Аннотация_2_этап_на_сайт.docx

Աղյուսակ 2
ՀՀ պետական բյուջե հաշվեգրված ԱԱՀ և ակցիզային հարկ

	2015		2016		2017		2018		2019*	
	մլն դրամ	Աճի տեմպ, %	մլն դրամ	Աճի տեմպ, %	մլն դրամ	Աճի տեմպ, %	մլն դրամ	Աճի տեմպ, %	մլն դրամ	Աճի տեմպ, %
ԱԱՀ, այդ թվում՝	423,933.5	96.3	391,087.7	92.3	408,783.7	104.5	438,219.2	107.2	356,224.9	116.7
ԵԱՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	45,659.9	-	65,934.8	144.4	84,483.7	128.1	91,988.1	108.9	70,592.3	106.8
Ակցիզային հարկ, այդ թվում՝	48,988.9	96.9	59,745.2	122.0	82,324.8	137.8	108,961.8	132.4	82,247.1	110.7
ԵԱՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	3,678.6	-	9,925.8	269.8	13,569.7	136.7	9,739.3	71.8	10,950.7	147.1

* 2019 թ. հունվար-սեպտեմբերի տվյալները, աճի տեմպը՝ հաշվարկված նախորդ տարվա նույն ժամանակահատվածի տվյալների նկատմամբ՝

Գնահատելով ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսական ինտեգրման գործընթացի հաջողությունները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն աստիճանաբար դառնում է աշխարհում տնտեսական բևեռ՝ պետք է կարևորենք նաև, որ Միության անդամ պետությունների հետ անմիջական սահման չունենալը և ցամաքային կապի նեղ միջանցք ունենալը լուծման կարիք ունեցող օրակարգային հարցեր են: Այդպիսի այլընտրանք մեզ համար կարող են լինել լաստանավերը կամ ցամաքային այլընտրանքային Ռուսաստան-Վրաստան ավտոճանապարհը ու երկաթուղին, որոնց կառուցման մասին վերջերս խոսել է Չեչնիայի նախագահը:

Այսպիսով՝ ամփոփելով կարող ենք ասել.

- ԵԱՏՄ անդամակցության առաջին տարիները, երբ անկումային ցուցանիշներ են արձանագրվել, և ինչն էլ հաճախ ներկայացվում է որպես բացասական ազդեցություն ՀՀ տնտեսության վրա, պայմանավորված Միությանն անդամակցությամբ, ընդգրկում են ԵԱՏՄ ամենամեծ տնտեսությունն (կամ ՀՆԱ) ունեցող երկրի՝ ՌԴ տնտեսական ճգնաժամի ժամանակահատվածը, որ, բնականաբար, անդրադարձավ նաև տնտեսական և այլ կապերով ՌԴ-ին կապված երկրների, այդ թվում՝ ՀՀ-ի վրա. նկատենք, որ սա ևս Միությանն անդամակցությամբ պայմանավորված գործոն չէ:

- Ինտեգրման գործընթացը դեռևս շարունակական զարգացման փուլում է (առանձին ոլորտներում լիարժեք ինտեգրման ավարտ նախատեսվում

¹ ՊԵԿ Հարկային վիճակագրական տվյալներ, «2019 թվականի սեպտեմբեր ամսվա Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն», <http://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTITaxStatData>

է 2025 թվականին), և ՀՀ ազգային տնտեսության վրա Միության ազդեցությանը *միանշանակ* գնահատական տալու մասին խոսելը դեռևս վաղ է:

- Բյուջետային մուտքերի առումով, ներմուծման մաքսատուրքերի բաշխման կառուցակարգն ունեցել է դրական ազդեցություն ՀՀ-ի համար՝ ապահովելով մի քանի միլիարդ դրամի աճ: Բաշխման տարբեր մեթոդների քննարկումներին որպես արձագանք՝ առաջարկում ենք վերանայել ներմուծման մաքսատուրքերի բաշխման նորմատիվները՝ հաշվարկման հիմքում ունենալով մի քանի բաղադրիչ՝ բաշխման առավել օբյեկտիվ ցուցանիշ ունենալու համար (նկատենք, որ նորմատիվների վերանայման առնչությամբ կան տարակարծություններ, մասնավորապես՝ Բելառուսը վերջերս արձարծում է դրանց վերանայման հարցը):

- Հայաստանը ԵԱՏՄ անդամ մյուս պետությունների հետ չունի ընդհանուր սահման, ինչը կարող է դիտարկվել երկու տեսանկյունից. այն առումով, որ, ի տարբերություն մյուս անդամ երկրների, *մեր սահմանին հայտարարագրվում են բոլոր ապրանքները, անկախ նրանից՝ Միության անդամ երկրներից են ներմուծվում, թե երրորդ երկրից*, և սա որոշակիորեն վերահսկողության կառուցակարգեր ու նաև մաքսային հստակ վիճակագրության ուսումնասիրության հնարավորություն է տալիս, և մյուս կողմից, ցամաքային ճանապարհով առևտրաշրջանառությունը որոշակիորեն կախվածության մեջ է ընկնում այլ երկրներից, առավելապես՝ Վրաստանից՝ ՌԴ-ՀՀ փոխադրումների պարագայում, իսկ վերջինս, Միության անդամ չհանդիսանալով, կարող է տարանցման լրացուցիչ խոչընդոտների ստեղծմամբ դժվարացնել ապրանքաշրջանառության ծավալների ընդլայնումը: Այստեղ կարևորում ենք այլընտրանքային ճանապարհներ գտնելու հարցը: Այդպիսի այլընտրանք կարող է լինել լաստանավային փոխադրումը Վրաստանի հետ համաձայնության ձեռքբերմամբ, որը երկարատև և պայմանագրային հիմունքներով առավել կայուն պայմաններ կստեղծի առևտրաշրջանառության կազմակերպման համար:

- Փոխադարձ ներդրումների ակտիվացման, անձնական դրամական հոսքերի և աշխատուժի ազատ տեղաշարժով պայմանավորված՝ հետագայում կենսաթոշակային ապահովության հետ կապված փոխադարձ հաշվարկների իրականացման ժամանակ արտարժույթային դիսկից խուսափելու համար օրակարգային խնդիր է միասնական արժույթի ստեղծման հիմնահարցը՝ չբացառելով ազգային արժույթների շրջանառությունն անդամ երկրներում: Առաջարկում ենք կիրառել մեկ միասնական արժույթ անկանխիկ հաշվարկների իրականացման համար, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ կանխիկ դրամաշրջանառությունը բավական արագորեն զիջում է իր դիրքերն անկանխիկին, և հաստատել անդամ երկրների արժույթների փոխարժեքներն այդ միասնական արժույթի նկատմամբ:

- Փոխադարձ ներդրումների և առևտրի ակտիվացմանը խոչընդոտող հանգամանք է նաև անդամ երկրներում օրենսդրական դաշտերի անհամապատասխանությունը, մասնավորապես՝ հարկային դաշտի տարբերությունները, ինչը գործարար շրջանակների համար անորոշության և լրացուցիչ դիսկերի առաջացման աղբյուր է: Առաջարկում ենք անդամ բոլոր երկրների համար մշակել ընդհանուր սկզբունքային միասնական քաղաքականություն՝ հարկային օրենսդրության միասնական սկզբունքներ, սակայն, հաշվի առ-

ներվով անդամ պետությունների տնտեսությունների առանձնահատկությունները, կարգավորումը առավելապես թողնել ազգային օրենսդրությանը:

Այս հարցի լուծման ուղղությամբ կարևորում ենք նաև ազատ տնտեսական գոտիների գործարկումը, որը կբերի ներդրումների հոսքի դեպի Հայաստան՝ հաշվի առնելով մեր հարավային դիրքով պայմանավորված առավելությունները գյուղատնտեսության մեջ, իսկ հայկական արտադրանքը կարող է այլընտրանք լինել երրորդ երկրներից ներմուծվող գյուղատնտեսական ապրանքների համար: Սա նաև հնարավորություն կտա արտադրական գործընթացի տարբեր փուլեր իրականացնելու անդամ տարբեր պետություններում (օրինակ՝ ռուսական հումքի մշակում Հայաստանում), իսկ փոխադրման և այլ ծախսերը կփոխհատուցվեն հարկային արտոնյալ պայմաններով:

• ԵԱՏՄ անդամ երկրների շրջանակում ավելանում են ոչ միայն փոխադարձ առևտրի ծավալները, այլև աշխատուժի ազատ տեղաշարժով պայմանավորված անձնական դրամական փոխանցումները, որոնք առաջացնում են ոչ միայն ընդհանուր արժույթի ստեղծման անհրաժեշտություն, այլև բանկային համակարգերի ինտեգրման խնդիր՝ փոխանցումներ իրականացնելիս հնարավոր կորուստներից ու ծախսերից հնարավորինս խուսափելու համար: Դրամական հոսքերի առավել արդյունավետ կազմակերպման նպատակով կարող է ստեղծվել անդամ բոլոր երկրների բանկային համակարգերն ինտեգրող մեկ միասնական մարմին՝ Կենտրոնական բանկ՝ Միության մակարդակով, որը կկարգավորի ինչպես ընդհանուր արժույթի փոխարժեքը, այնպես էլ կզբաղվի բանկային համակարգում վերահսկողության միասնական մեթոդների մշակմամբ ու կիրառմամբ՝ չբացառելով ազգային բանկերի ինքնուրույնությունն ու կարևորությունը:

Գրականություն

1. <http://www.eurasiancommission.org>
2. <http://www.eaeunion.org>
3. <http://www.petekamutner.am>
4. <https://www.cba.am>
5. <http://armstat.am>
6. Դիտարկված մասնագիտական գրականություն:
7. Ժամկոչյան Ա., Եվրամիություն և Մաքսային միություն՝ գործընկեր, թե՞ մրցակից, Եր., 2014:
8. Մուրադյան Վ., Մաքսասակագնային կարգավորման խնդիրները ՀՀ-ում, Եր., 2018:
9. Խաչատրյան Մ., Արտաքին առևտրաշրջանառության ավելացման ուղիները և կարևորությունը ՀՀ տնտեսական զարգացման համար, Եր., 2017:
10. Առաքելյան Ա., Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության ներկայիս տնտեսական հետևանքները, Եր., 2017:
11. Գրիգորյան Կ., ՀՀ արտահանման ցուցանիշների կանխատեսումները ԵԱՏՄ մաքսատուրքերի պայմաններում, Եր., 2017:
12. Գրիգորյան Ա., Մկրտչյան Տ., Եվրասիական տնտեսական միության՝ թե՞ ռուսական շուկա, Եր., 2015:
13. Թավադյան Ա., ԵԱՏՄ երկրների տնտեսական քաղաքականության համաձայնեցման սկզբունքները, Եր., 2015:

АНАИТ ИСРАЕЛЯН*Финансы, бакалавриат, 3-й курс*

ДИНАМИКА РАЗВИТИЯ БЮДЖЕТНЫХ ПОСТУПЛЕНИЙ И ПРЕДОСТАВЛЕННЫЕ ЕДИНОЙ ТАМОЖЕННОЙ ТЕРРИТОРИЕЙ ВОЗМОЖНОСТИ, ОБУСЛОВЛЕННЫЕ ЧЛЕНСТВОМ ЕАЭС

Ключевые слова: *Евразийский экономический союз (ЕАЭС),
ввозные таможенные пошлины,
таможенная зона, интеграция, бюджет*

Вступив в ЕАЭС, Республика Армения установила новую таможенную политику, что нашло своё отражение в бюджетных поступлениях от ввозимых из третьих стран товаров, а благодаря единому таможенному пространству мы получили возможность свободного перемещения товаров, услуг, капитала и трудовых ресурсов. Рассматривая официальные обоснования членства в Союзе и точки зрения аналитиков, наша задача выяснить, какое влияние имеет членство в Союзе на государственный бюджет РА насчёт доходов и какие возможности создают формирование единого таможенного пространства и изменения ставок таможенных пошлин для дальнейшего развития экономики.

ANAHIT ISRAYELYAN*3rd Year, Bachelor's Degree, Finance*

CHANGES IN BUDGET REVENUES RELATED TO EAEU MEMBERSHIP AND OPPORTUNITIES IN THE COMMON CUSTOMS TERRITORY

Keywords: *Eurasian Economic Union (EAEU), import
duties, customs territory, integration, budget*

Our country adopted a new customs policy joining the EAEU which was reflected in the budget revenues from import duties on goods imported from third countries, and we got an opportunity to move goods, services, capital and labor freely in the customs territory of the Union creating a common customs area. Our aim is to find out what impact the membership of the Union has had on the RA budget in terms of revenues, understand the opportunities that were provided by the creation of a common customs area and changes in import customs rates for further economic development.